ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «20» սեպտեմբերի 2019թ.

2019թ-ի սեպտեմբերի 13-20, ՀՀ, ք. Երևան, Արին-Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում գտնվող «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի վարչական շենքում տեղի ունեցավ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Ա. Գևորգյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի տեխնիկական տնօրեն.
Ս. Չիդեմյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ԿՏԱ-ի պետ.
Ա. Վարդանյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի շուկայի ուսումնասիրության և հաշվառման գծով մասնագետ.
Ա. Պետրոսյան	«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի Մ և Գ բաժնի առաջատար մասնագետ գնումների գծով.Լ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր հանձնաժողովի քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է վեց անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի չորս անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Գևորգյանը, իսկ քարտուղարն էր՝ Տիրան Լաճիկյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Տիրան Լաճիկյանը՝ հայտնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը ներկայացվել է հանձնաժողովի անդամներին, սակայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ «ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊԸ-ի, կողմից սահմանված կարգով չեն ներկայացվել ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Որոշվեց՝

1. Նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով:
2. Տիրան Լաճիկյանին՝ ծանուցել մասնակցին առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ «ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊԸ-ի կողմից սահմանված կարգով չեն շտկվել արձանագրված անհամապատասխանությունները՝ մասնակցի կողմից փաստաթղթեր չեն ներկայացվել:

Որոշվեց՝

1. Տիրան Լաճիկյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն:
2. «ՏՈՒՐԲԵԿՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

2. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, և հաստատել «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/120 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 4
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Գևորգյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ս. Չիդեմյան _____

Ա. Վարդանյան _____

Ա. Պետրոսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Տ. Լաճիկյան _____